23981

Ի պաշտպանություն սոց.
Կարմիր բանակի

331.87
Ի-11

1935

15 JAN 2010

ՅԵՐԿՈՒ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ի ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿՈՉԻՆ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 1935 ԹՎԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՍԽՀ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶՈՒԼԱՔԱՐ ՅԵՎ ՀՅՈՒՍԻՍ-ՈՍԵԹԻԱՅԻ ՈՐՁՈՆԻԿԻՁԵՅԻ ՇՐՋԱՆԻ ԽՈՍՏԱ ԳՅՈՒՂԵՐԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԸ

331.87
Ի-11

ԳՅՈՒՂՇՐԱՏ—ՅԵՐԵՎԱՆ 1935

23981

26 APR 2013

2006
38

Պատ. խմբագիր՝ Հ. Զեյնգյուլյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Մուրադյան
Լեզվ. խմբագիր՝ Աբր. Գրիգորյան
Սրբագրիչ՝ Թ. Ախայան

Հրատ. 254, Գլավլիտի լիազոր Ս—424, պատվեր 477, տիրաժ 2000
Հանձնված է արտադրության 1935 թ. ոգոստոսի 20-ին
Ստորագրված է տպագրելու 1935 թ. սեպտեմբերի 5-ին

Գյուղհրատի տպարան, Երևան Նալբանդյան 11

331.87
Ի-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶՈՒԼԱՖԱՐ ԳՅՈՒՂԻ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ

Հյուսիսային–Ոսեթիայի մարզի Որջոնիկիձեյի շրջանի Խոսոտա գյուղի կարլ Մարքսի անվան կոլտնտեսության վարչության Նախագահ՝ ընկ. Ս. Գիոյևին կաձի վարիչ՝ ընկ Կալոյևին

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵ՛Ր.

Մեր շրջանը սոցիալիստական մրցության պայմանագիր է կնքել ձեզ հետ։ Մենք մրցման մեջ ենք մտել գերակատարելու համար անասնապահության զարգացման 1935 թ. պետական պլանը։ Վերջերս ձեր շրջանի Գործադիր կոմիտեյի նախագահ ընկ. Անդրոն ստորագրեց այդ պայմանագիրը։ Մեր բոլոր կոլտնտեսականներն արդեն գիտեն այդ մրցության մասին. Ձեր պատգամավորության մեզ մոտ գալուց մեկ որ առաջ, մեզ մոտ կայացավ անասնապահների շրջանային հավաք, վորտեղ մենք բոլորս, ի պատասխան այդ պայմանագրի, իրար մեջ կնքեցինք մրցման պայմանագրեր։

Ընկ. Անդրոն մեզ վորոշ բաներ պատմեց ձեր կոլտնտեսության մասին։ Մենք գիտենք, վոր ձեզ մոտ կա 5000 գլուխ մանր անասուն և վոր այս տարի դուք ամբողջապես լուծարքի յեք յենթարկել մատղաշների անկումը։ Մենք գիտենք, վոր դուք վերացրել եք կոլ-

տնտեսականների կովազրկությունը և վատ չեք պայքարում իրականացնելու կուսակցության սիրելի առաջնորդ, մեր լավագույն բարեկամ ընկ. Ստալինի լոզունգը՝ անասնապահության զարգացման մասին։

Բայց մենք ուզում ենք իմանալ ձեր կոլտնտեսության մասին ավելի մանրամասն։ Մենք ուզում ենք փոխանակել ձեզ հետ մեր փորձը և մտնել ձեզ հետ մրցության մեջ՝ անասնապահության զարգացման պլանը գերակատարելու համար։

Մեր կոլտնտեսությունը փոքր է ձերինից։ Մեզ մոտ ընդամենը 500 տնտեսություն են, ըստ վորում դրանցից 200-ը կոլտնտեսություն են մտել միայն այս տարվա գարնանը։ Մեզ մոտ կա 667 վոչխար և ծնից հետո մենք ունենք 714 գառ։ Վոչխարաբուծական ֆերմայի գծով մենք ունեցել ենք կորստի ընդամենը 7 դեպք և այն ել անհաջող ծնի հետևանքով։ Մեր յուրաքանչյուր գառն այժմ կշռում է մոտ 20 կիլոգրամ։ Մենք նրանց սիստեմատիկաբար կշռում ենք, վորպեսզի հնարավորություն ունենանք ճշտորեն վորոշել նրանցից յուրաքանչյուրի աճը։ Մեր վոչխարների մի մասը տեղական «Մազեխ» ցեղից են։ Մենք վորոշել ենք աստիճանաբար փոխարինել նրանց «Բալբաս» ցեղի վոչխարներով, վորոնք և՛ մսատուությամբ և՛ բրդատվությամբ շատ ավելի լավ են, քան տեղական ցեղը։ Այդ իսկ նպատակով մենք արդեն ձեռք ենք բերել 40 ցեղական «Բալբաս» գառ։

Մեր ֆերմաներում առ 1-ն հունվարի 1935 թ. կար 1,127 գլուխ մանր անասուն, այժմ կա՝ 1,888 գլուխ։

Մեզ մոտ վատ չի դրված աշխատանքը նաև խոշոր յեղջյուրավոր անասունների ֆերմայում։ Աշխատանքի ճիշտ կազմակերպման՝ «անասնապահ-կթողների» սիստեմի կիրառման շնորհիվ ֆերմայում անկման վոչ մի դեպք տեղի չի ունեցել և ստացված վոզջ սերունդը միանգամայն առողջ վիճակում է։

Կովերի ցեղը մենք նույնպես բարելավում ենք. ունենք «շվից» ցեղի 3 արտադրող, աճեցնում ենք նույն ցեղից 7 հորթ։

Ձեզ մրցման հրավիրելով, մենք պարտավորվում ենք՝ տարվա վերջում մանր անասուններն ավելացնել 55%-ով, խոշորը՝ 47%-ով։ Ձիերի թիվը տարվա վերջում հասցնել 32-ի այսորվա 14-ի փոխարեն։ Յուրաքանչյուր վոչխարից պլանով նախատեսված 85 կիլոգրամ կաթի փոխարեն տալ 105 կիլոգրամ, 1,8 կգ. բրդի փոխարեն պետությանը տալ 2,2 կգ. բարձրորակ բուրդ։

Այս տարի մեր քոչատեղերում մենք քիչ աշխատանք չենք կատարել, վորպեսզի բարձրացնենք անասունների մթերատվությունը և քոչատեղերը վերածենք իսկական կուլտուրական աշխատանքի ոջախի։ Գյուղից մինչև քոչատեղն անց է կացված 9 կիլոմետր ճանապարհ և այժմ վոչ միայն սայլեր, այլ և ավտոմեքենաներ են բարձրանում մեզ մոտ։ Քոչատեղերում կառուցել և սպիտակացրել ենք 4 քարաշեն դոմ, հորթանոցներ։ Քոչատեղերում անասունները կապվում և կթվում են հատուկ կառուցված ծածկերի տակ։ Քոչատեղերն ապահովված են լվացարաններով, սապնով, յուրաքանչյուր կթողն ունի մաքուր յերեսսրբիչ, թաշկինակ, գոգնոց։ Կթելուց առաջ լվանում են կովի պտուկները։ Քոչատեղերում կազմակերպված են անգրագիտության վերացման 2 կետ։ Աշխատում է զոո-

վետ մինիմումի տիրապետման խմբակը, ուր ընդգրկված են բոլոր անասնապահները, կթողներն ու չոբանները։ Ցուրաքանչյուր որ մենք ստանում ենք թարմ թերթեր։ Կանոնավոր անց են կացվում քաղխմբակի պարապմունքները։

Քոչատեղերում՝ մեր պատմության մեջ առաջին անգամ՝ կառուցել ենք քարաշեն ակումբ, սպիտակեցրել ենք այն և յերեկոները լամպի լույսի տակ կոլտնտեսականները կարդում և պարապում են ակումբում։

Մեր աղատ ժամանակն էլ վատ չի կազմակերպվում։ Մեզ մոտ կա պարողների խմբակ և յերգեցիկ խումբ։ Մեր անասնապահները, կթողներն ու յերիտասարդությունը յերեկոները կազմակերպում են պարեր, խմբական յերգեր։ Այդ խմբակն արդեն ունեցել է 2 յելույթ։

Բոլոր կանանց անխափան աշխատանքն ապահովելու համար, քոչատեղերում մենք բացել ենք մանկական հրապարակ և մսուր՝ 47 յերեխայի համար։ Մեզ մոտ, քոչատեղերում կան ժամացույցներ։ Կիթը և ամբողջ աշխատանքն սկսում են իր ժամանակին։ Մոտ որերս ձեռք ենք բերելու մեծ զանգ, վորով պետք է զանգահարենք, վորպեսզի քոչավայրերի բոլոր ծայրերում իմանան աշխատանքն սկսվելու մասին։ Այս տարի մեզ մոտ յեկող հյուրերի համար քոչավայրում բացինք հյուրանոց՝ 4 մահճակալով։

Շատ մթերք ստանալու համար մենք կազմակերպել ենք անասունների գիշերային արոտը, գործադրում ենք կթի վերահսկողության մեթոդը։

Մեր կոլտնտեսության լավագույն կթողները— Մարգիտ Թովմասյան, Խանում Շահինյան, Խանում

Ոհանյան և ուրիշները գերակատարում են կթի որական նորմաները, լավ են խնամում իրենց կովերին և հորթերին։ Մեր լավագույն չոբան Սարգիս Գրիգորյանը արդեն 4 տարի յե խնամում է կոլտնտեսության հոտը և որինակելի աշխատանքի համար պարգևատրվել է ՀՍԽՀ ԿԳԿ-ի պատվո գրով։ Մեր չոբանները կնքել են մրցման պայմանագիր և յուրաքանչյուրը պարտավորվել է աճեցնել 2-ից վոչ պակաս վոչխարապահ լավ շուն։

Այժմ գյուղում մենք կառուցում ենք նոր տիպի մեծ գոմ՝ 120 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասունի և նրանց հետ յեղող հորթերի համար։ Քարի աշխատանքները վերջացել են։ Ձեռք ենք բերել 200 գերան և շուտով կծածկենք մեր կովանոցի կտուրը։

Վատ է մեզ մոտ գործը կոլտնտեսականների կովազրկությունը վերացնելու գործում։ Ցոթանասուն յերկու տնտեսություն դեռևս հորթ չունին, բայց մենք վորոշել ենք յերկու ամսվա ընթացքում այդ բանին էլ վերջ տալ։

Ահա, սիրելի ընկերներ, կարճ մեր կոլտնտեսության անասնապահության մասին։

Դաշտավարության ասպարիզում մենք նույնպես հասել ենք վորոշակի հաջողություններ։ Մենք այս տարի պայքարում ենք հեկտարից 15 ցենտ. բերքի համար և ձեռք ենք առել բոլոր միջոցներն ապահովելու այդ ռեկորդային թվի ստացումը։ Իսկ դա իսկապես ռեկորդային է, վորովհետև 1934 թ. մենք հեկտարից ստացանք միջին հաշվով վոչ ավելի քան 10 ցենտ։

Մեկ նամակում, ընկերներ, ամեն բան չես կա-

րող տալ, իսկ մենք շատ բան եյինք ուզում տալ. յեթե դուք կընդունեք մրցման մեր հրավերը, այն դեպքում մենք ձեզ կգրենք սիստեմատիկաբար:

Իսկ առայժմս խնդրում ենք պատասխանել մեր նամակին, հաղորդել մեզ ձեր կոլտնտեսության, ձեր աշխատանքի ձևերի, ձեր անասունների կաթնատվության, մատղաշացման, իսկ գլխավորը՝ ձեր ֆերմայում աշխատանքի կազմակերպման մասին:

Մենք հավատացած ենք, որ այս մրցակցության մեջ, ինչպես մենք, այնպես էլ դուք սոցիալիստական անասնապահության արագ զարգացման գործում ձեռք կբերենք մեծ հաջողություններ:

Մենք կոչ ենք անում ձեզ, ծավալել մրցության ալիքը մեր սիրելի առաջնորդի լոզունգի արագ և լավագույն կենսագործման համար, անասնապահության ասպարիզում վերջնական հաղթանակի համար:

Սպասում ենք ձեր նամակին:

Բարևներով կոլտնտեսականների հանձնարարությամբ՝ (5 ստորագրություն)

ՀՍԽԴ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ

Զոլաքար գյուղի կոլտնտեսության վարչության նախագահ՝
Հայկարամ Սարգսյանին
ՎաՖ-ի վարիչ՝ ընկ. Համբարձում Սահակյանին
ԿաՖ-ի վարիչ՝ ընկ Խաչիկ Ռհանյանին
յեվ բոլոր կոլտնտեսականներին

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐՆԵ՛Ր.

Մենք մեծ գոհունակությամբ քննեցինք ձեր նամակը կոլտնտեսային ընդհանուր ժողովում:

Անասնապահության զարգացման պլանի գերակատարման համար, սոցիալիստական մրցության ձեր հրավերը մենք մեծ պատրաստակամությամբ ենք ընդունում: Ձեզ հետ մրցակցության և գյուղատնտեսական արտելի Ստալինյան կանոնադրության հիման վրա—որպիսին հուլիսի 1-ին արդեն վերջնականապես ընդունեցինք մենք—մենք էլ ավելի համառորեն կպայքարենք կենսագործելու համար մեր կուսակցության և վողջ աշխատավորության առաջնորդ, բարեկամ և ուսուցիչ, մեր ընկ. Ստալինի լոզունգը՝ «դարձնենք կոլտնտեսությունները բոլշևիկյան և կոլտնտեսականներին՝ ունևոր»:

Մեր կոլտնտեսություններում ընդգրկված են 356 տնտեսություն: Մենք տարեց տարի աճում ենք և ամրանում: Մենք, ինչպես և դուք՝ հաջողություններ ունենք անասնապահության և դաշտավարության մեջ:

Մեր ՎԱՖ-ում առ 1-ն հունվարի 1935 թ. յեղել է՝ պետ-ցեղաբուծական մատյանում գրանցված՝ 850 գլուխ թուշի ցեղական մայր, 804 մետիս, 131 կարակուլ, 165 թուշի գառ., ընդամենը 3.360 գլուխ։ Այժմ մեր ֆերմայում կա 4.962 անասուն, այդ թվում 1785 մորից 1935 թ. ստացած ամը՝ 1924 գլուխ։ Միայն «Սաուսեկ» մայրը տվել է 4 գառ. 1 մայր տվել են 3-ական գառ. ամբողջ ամը կենդանի յե և առողջ։

ԽԱՖ-ում մենք ունենք 360 անասուն։ ԿԱՖ-ը մեզ մոտ կազմակերպման շրջանումն է գտնվում, ուր կա ընդամենը 48 գլուխ, կովեր դեռ չկան. կա 3 ցուլ «շվիցց» և մեկը՝ գերմանական կարմիր ցեղից։ Հորթերի մեծամասնությունը մետիսներ են։

Անասնապահության զարգացման ուղղությամբ մեր ձեռք բերած հաջողությունների համար մենք մեծ չափով պարտական ենք մեր լավագույն հարվածային անասնապահներին՝ ՎԱՖ-ի բրիգադիր Սադուլլա Ենալդիյեվին. չոբաններ՝ Խարիտոն Կուչայեվին, Իլյա Աբայեվին, Ցիցինայ Բոսլոկիյեվին, Կաուլիկ Գուբայեվին, Խազբին Գիոյեվին, Մայիսեյ Կաճովին. կթողներ՝ Զաբեն Կալոյեվային, Մզակո Գիոեվոյին և ՎԱՖ-ի վարիչ Մոիսեյ Կալոյեվին։ Նրանք են խնամում կոլտնտեսության հոտը. հարվածային կոլտնտեսականի պարտականությունը ազնվորեն են կատարում։

Կոլտնտեսության առաջին պատվիրանը—պետական պարտավորությունները—մենք միշտ կատարում ենք ժամկետից շուտ և բարձրորակ արտադրանքով։ 1935 թ. մսի հանձնման պլանը կատարեցինք առաջին յեռամսյակում, բուրդն ել նույնպես վաղուց ենք հանձնել։

Այժմ ֆերմաներում աշխատանքի կազմակերպման մասին։ Մեր ԿԱՖ-ը բաժանված է 5 հոտի։ Ցերկու խումբ մայրեր, ցուլերի խումբ, անցյալ տարվա մատղաշները և 1935 թ. գառները։ Բոլոր հոտերն արածում են առանձին-առանձին. հոտի գլուխը կանգնած է բրիգադիրը. բրիգադիրները մրցում են իրար հետ։ Աշխատանքը վարձատրվում է ըստ անասունի ամի, գերության, պահպանման և մթերատվության։ Հարվածային աշխատանքի համար կիրառվում է խրախուսանքի սիստեմը. այս տարի 28 գառով և դրամով պարգեվատրել ենք 10 չոբանի։ Նույն այդ ձեվով է կազմակերպված աշխատանքը ԽԱՖ-ում և ԿԱՖ-ում։

Այժմ համառոտակի մեր դաշտավարության մասին։

Դաշտավարության գծով մենք քիչ հաջողություններ չունենք։ Մեզ մոտ կոլտնտեսության ցանքային հողաշերտը 1241,5 հեկտար է, վորից 286 հեկտար կարտոֆիլ, 202՝ ցորեն, 564՝ յեգիպտացորեն, մնացած տարածությունները բանջարանոցներ են, իսկ մի մասումն ել տեխնիկական կուլտուրաներ են մշակված։ Անցյալ տարի յեգիպտացորենի բերքատվությունը յեղել է միջին հաշվով 30 ցենտներ, ցորենինը՝ 18, կարտոֆիլինը 160։

Այս տարի այդպիսի բերքատվության հետ մենք չենք հաշտվի։ Հացը լավ է աճում։ Մեկ հեկտարից կստանանք առնվազն 230 ց. կարտոֆիլ, 25 ց. ցորեն, 55 ց. յեգիպտացորեն։ Դրա յերաշխիքը հանդիսանում է և՛ տեմպով և՛ վորակով որինակելի կերպով անցկացված գարնանացանը. հացահատիկային կուլտուրաները ցանել ենք ապրիլի 15-ին։ Մարտականորեն

ամրապնդեցինք ցանքի հաջողությունները. բոլոր կուլտուրաների յերկակի և յեռակի քաղհանն ավարտեցինք հունիսի 24-ին։ Այժմ մեր դաշտերը բացարձակապես մաքուր են. նրանցում և վոչ մի մոլախոտ չկա։

Այս տարի մենք դնում ենք յեկող տարվա բարձր բերքի հիմքը. կատարում ենք ցրտահերկ և խոզանավար, առանձնացնում ենք ամենալավ սերմացուները։ Ահա թե ինչու մենք համոզված ենք բարձր բերքատվության մեջ։ Ահա թե ինչու մենք նախատեսում ենք աշխորին ստանալ 80 կիլոգրամ բոլոր տեսակի կուլտուրաներից անցյալ տարվա 60-ի փոխարեն։

Մեր կոլտնտեսությունում բարձր բերքի համար մղված պայքարում աճել են հիանալի հարվածայիններ՝ մարզի լավագույն բրիգադիրներից Ալեքսանդր Սաուտնով, Սոնիա Բոցիյեվան, Տեմբել Տագիյեվը, Թամբա Ջանիյեվը և տասնյակ ուրիշները։ Հասկերի հավաքմանը մենք պատրաստ ենք թեկուզ և, այսոր—կհավաքենք բոլորը մինչև վերջին հասկը։ Պետությանը կտանք լավագույն հացահատիկը, հանձնման պլանը կկատարենք մեկ որում։ Մեզ մոտ այս բոլորը, մինչև ամենափոքր մանրուքը—մտածված, մշակված և կազմակերպված է։

Կոլտնտեսինարարության մասին պատմելիս, սկսենք չորաններից։ Ամառային արոտավայրերում—սարերում, ձմեռային արոտավայրերում—Ղզլարի, տափաստաններում կառուցում ենք կուլտուրական կայաններ. Ղզլարի տափաստանում կառուցում ենք նաև բաղնիք և ակումբ. ամբողջ այս շինարարությունը ավարտելու յենք այս տարի։ Այս տարի մեր չորանները չեն տխրի. կա պատեֆոն, գրադարան և այլն։

Գյուղում ավարտում ենք բաղնիքի կառուցումը, վերջացնում ենք ելեկտրոսարքավորումը և, մինչև ոգոստոսի 1-ը բոլոր կոլտնտեսականների բնակարաններին կտանք լույս, անց ենք կացնելու ռադիո, տընկել ենք պարտեզ, կուլտուրայի պարկ։

Դպրոցը լիովին պատրաստ է ուսումնական տարվան. վերանորոգել ենք, ապահովել ենք վառելիքով։ Այս տարի կառուցում ենք բրիգադային նոր կայաններ (ստաններ), արդեն կառուցել ենք 5 կայան, 2-ը կավարտենք Հոկտեմբերյան տոներին. մեր կայանները կլինեն կուլտուրական՝ բառի բուն իմաստով։ Գյուղում աշխատում են ֆիզկուլտուրայի, ռազմական, յերգեցիկ խմբակներ։ Մեր կոլտնտեսականները հազարավոր որինակներով յերկրային-մարզային և շրջանային թերթեր են դուրս գրում։

Ուզում ենք ձեզ հայտնել, վոր կոլտնտեսական Խրիստոֆոր Ինեյեվի առաջարկով գյուղարտելի կանոնադրության մեջ մենք մտցրեցինք մի կետ ագրոքաղաքի կառուցման մասին և շատ ուրիշ կետեր, վորոնք տանում են դեպի յերջանիկ, բերկրալի, կոլտնտեսական կյանքը։

Ընդունելով ձեր մրցահրավերը, մենք պարտավորվում ենք՝ դերակատարել անասնապահության զարգացման 1935 թ. պետական պլանը—մանր անասունների գծով 5%-ով, ԿԱՖ-ի համար ձեռք բերել 15 հորթ, խոզերի գծով պլանը դերակատարել 5%-ով։

Տարվա վերջին կազմակերպում ենք ձիաբուծական ֆերմա՝ 20 մայրերից բաղկացած։

Դաշտավարական յուրաքանչյուր բրիգադ, բացի մանր անասուններից և թռչուններից, ունենալու յե

2—3 կով։ Մեր կոլտնտեսականներն անհատական ոգտագործման համար ունեն 742 գլուխ խոշոր յեղջյուրավոր անասուն։ Բայց, այնուամենայնիվ, մեզ մոտ դեռևս կան կովազուրկ տնտեսություններ. սխալ են ձեզ տեղեկացրել այն մասին, որ մենք վերացրել ենք կովազրկությունը։ Մեզ մոտ կով չունեն 27 տնտեսություն, որոնք կորցրել են իրենց կովերին համաճարակի հետեվանքով. պարտավորվում ենք մինչև տարվա վերջն այդ տնտեսություններն ապահովել հորթերով։ Կաշխատենք որ յուրաքանչյուր տնտեսություն տարվա վերջին ունենա 100 թռչնից վոչ պակաս։ Բացի այդ բոլորից, մեր կոլտնտեսականներն ունեն 1115 խոզ և 572 վոչխար ու այծ։

Ոգոստոսին կավարտենք 100 գլխի համար կովանոցի կառուցումը։ Ղզլարի արոտավայրում (Դաղստանի ինք. ԽՍՀ) վոչխարների համար ոգոստոսին կառուցելու յենք փարախներ։

Սարում այս տարի բացելու յենք կոլտնտեսական հանգստի տուն՝ 20 հոգու համար, որտեղ հանգստանալու յեն մեր լավագույն հարվածայինները։

Սեպտեմբերից վոչ ուշ Սաուտնովի բրիգադում, մեր մարզի լավագույն բրիգադիր Միլիխո Ցարևի որինակով, բացում ենք յերեկոյան բանֆակ, համակոլտնտեսային դասընթաց՝ կանանց ղեկավար աշխատանքի պատրաստելու համար. ձմեռային արոտավայրերում կազմակերպում ենք չոբանների վերապատրաստման դասընթացներ։

Ճանապարհային շինարարության գծով պարտավորվում ենք կառուցել՝ Կոստա—Բեսլան խճուղին՝ 6 կիլոմետր յերկարությամբ, որից յերկու կիլոմետրն

4092

արդեն պատրաստ է և Կոստա—Բուխարինո խճուղին 2 կիլոմետր յերկարությամբ։ Ճանապարհաշինարարական աշխատանքը կավարտենք տարվա վերջին։ Սպիտակ բանդաներից Հյուսիսային Ոսեթիայի ազատագրման 15-ամյակի և մեր ինքնավար մարզի հրաչակման 11-ամյակի տոնակատարման հանդիսին հրավիրում ենք ձեր ներկայացուցիչներին ներկա լինելու։ Տոնակատարությունը տեղի կունենա ոգոստոսի 12-ին։ Հուսով ենք, որ ձեր ներկայացուցիչները կլինեն մեզ մոտ։ Դրանով կենդանի և ամուր կապ կհաստատենք մրցակցող կոլտնտեսությունների միջև։

Վողջույն Զոլաքար գյուղի կոլտնտեսության հարվածայիններին և հարվածյունուհիներին։

Կեցցեն Խորհրդային Հայաստանի բոլշեվիկյան կոլտնտեսությունները։

Կեցցե վողջ աշխատավորության առաջնորդ, մեր սիրելի ու թանկագին Ստալինը։

Կոստա գյուղի կոլտնտեսական ընդհանուր ժողովի հանձնարարությամբ՝

(Ստորագրություններ)

Սերգեյ Գիոյեվ —կոլտնտեսության նախագահ
Սաղուլլա Ննալդիյեվ —Վ.Ա.Տ-ի բրիգադիր
Խրիստոֆոր Խասիյեվ —ԽԱՏ-ի վարիչ
Սերգեյ Կոսայեվ
Ալիխան Բոցիյեվ Կոլտնտեսական
Ցեսիկա Բալայեվա հարվածայիններ

Զ.ԱԳ 38

В ОТВЕТ на ПРИЗЫВ ВОЖДЯ

СЕЛЬХОЗГИЗ-ЭРИВАНЬ 1935.

ՀՀ Ազգային գրադարան

NL0199117